Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԵԼՅԱԼ ՕԺԱՆԴԱԿՄԱՆ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԿԱՐԳ

Scanned with ACE Scanner

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Մ Ա Ն Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

ՈՐՈՇՈՒՄ N 99

«14» 07 2025թ. ք. Գորիս

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԵԼՅԱԼ ՕԺԱՆԴԱԿՄԱՆ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԿԱՐԳ

Ղեկավարվելով «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել «Գորիս պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսանողներին վարչական կազմի կողմից հավելյալ օժանդակման եվ ուղղորդման կարգը:

Նախագահ՝ ԱՐԱՐԱՏ ԼԱԼԱԲԵԿՅԱՆ _____

(ստորագրություն)

Քարտուղար՝ ԴԱՎԻԹ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ _____

(ստորագրություն)

Scanned with ACE Scanner

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՏՆՕՐԵՆ

ՀՐԱՄԱՆ N 32Լ

«26» 02 2025թ. ք. Գորիս

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՎԵԼՅԱԼ ՕԺԱՆԴԱԿՄԱՆ ԵՎ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԿԱՐԳ

ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսանողներին վարչական կազմի կողմից հավելյալ օժանդակման եվ ուղղորդման կարգը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԵՆ ԼԱԶԱՐՅԱՆ _____

(ստորագրություն)

Scanned with ACE Scanner

Հաստատված է
«Գորիսի պետական քոլեջ ՊՈԱԿ-ի տնօրենի
2025 թ. «26» հրամանով

Ընդհանուր դրույթներ

Գորիսի պետական քոլեջի վարչական անձնակազմի հիմնական գործառույթներից է ուսանողներին օժանդակումը և ուղղորդումը:

Վարչական անձնակազմի կողմից ուսանողների օժանդակումը և ուղղորդումը վերաբերում է կրթական գործընթացին և ուսանողական կյանքին, մասնավորապես՝

1. սոցիալական օժանդակում,
2. նյութական օժանդակում,
4. աջակցությունը ուսումնական գործընթացում:

Նպատակը և խնդիրները

Վարչական կազմի կողմից ուսանողներին հավելյալ օժանդակման և ուղղորդման հիմնական նպատակն է ուսումնառողների համար կրթական բարենպաստ միջավայրի ստեղծումը և սոցիալական աջակցումը:

Վարչական կազմի կողմից ուսանողներին հավելյալ օժանդակման և ուղղորդման նպատակներ են՝

1. Ուսանողների սոցիալական խնդիրների բացահայտում և սոցիալական օժանդակում,
2. Ուսանողական կյանքի ուսումնասիրում, կարիքների բացահայտում և ուղղորդում,
3. Ուսանողների մոտ ստեղծագործական հմտությունների զարգացում,
4. Ուսանողներների արտալսարանային կյանքի կազմակերպում և օժանդակում:

Կատարվող աշխատանքների ուղղվածությունները.

1. Ուսանողական ձայնի ուսումնասիրում և ուսանողական կյանքի բարելավում,
2. Ուսանողների ստեղծագործական կյանքի ապահովում,
3. Ուսանողների արտալսարանային կյանքի ապահովում,
4. Ուսանողության շրջանում միջոցառումների կազմակերպում,
5. Ուսանողների սոցիալական պաշտպանության կազմակերպում և ապահովում:
6. Ուսանողության շրջանում տեղեկատվության ապահովման համակարգի զարգացում,
7. Ցածր կուրսերի ուսանողների ուսումնական գործընթացին հարմարվելու աշխատանքների կազմակերպում,
8. Առաջադեմ ուսանողների խրախուսման համակարգի զարգացում:

Ուսանողները հավելյալ օժանդակման և ուղղորդման համար կարող են դիմել՝

- Քոլեջի տնօրենին (Տնօրենի հանդիպում ուսանողների հետ, քոլեջի կայքի միջոցով հետադարձ կապի ապահովում և այլն),
- Քոլեջի ուսումնական գծով փոխտնօրենին (կրթական աջակցություն),

Scanned with ACE Scanner

- Ամբիոնի վարիչներին և մեթոդմիավորման նախագահներին (ամբիոններում դասավանդվող դասընթացների յուրացմանը և ամրապնդմանը ուղղված հարցերի վերհանում և այլ հարցերի շուրջ օժանդակում),
- Տնտեսվարին (տնտեսական աջակցություն):

Ուսանողների աջակցմանն ուղղված հարցերը քննարկվում են՝

- Քոլեջի տնօրենի հետ բաց քննարկումների ժամանակ,
- Քոլեջի մանկավարժական խորհրդի նիստերին (սոցիալական ոլորտի հարցերին, առաջադիմությանը վերաբերող խնդիրներին վերաբերող որոշումների կայացում),
- Ամբիոնի վարիչների և մեթոդմիավորման նախագահների հետ հանդիպումների ժամանակ (ուսումնական գործընթացին վերաբերող, մշակութային և այլ խնդիրների վերհանում),
- Այլ վարչական մարմիններին և կառույցների ղեկավարներին դիմելու ժամանակ:

Տվյալ գործընթացը նպաստում է ուսումնական գործընթացի և ուսանողական կյանքի դյուրացմանն ու բարելավմանը:

Scanned with ACE Scanner